

Մարգիս Ռ. Մելքոնյան
Պատմ. գիտ. թեկնածու

**ԳԱՐԵԳԻՆ Ա ՀՈՎՍԵՓՅԱՆ. ԵՐԱՆԱԾՆՈՐՀ
ՀԱՅՐԱՊԵՏՆ ՈՒ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆՐ**

Մաս Դ: Ազգային-հասարակական գործունեությունը 1914-1917 թթ.*

Բանալի բառեր - Գարեգին Ա Հովսեփյան, Եղբայրական
օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողով, զաղթակա-
նություն, հանգանակություն, Գևորգյան հոգևոր ճեմարան:

Մուտք



Մեր ուսումնասիրության նախորդ մասե-
րում, որոնք հրապարակվել են «ՎԷՄ» հանդեսի
2018 թ. համարներում¹, մանրամասն անդրա-
դարձել ենք Գարեգին Հովսեփյանի ուսումնա-
ռության տարիներին և 1897-1917 թվականնե-
րին մեծանուն գիտնական-հոգևորականի կող-
մից առաջադրված հայոց եկեղեցու բարեկարգ-
ման ծրագրերին:

Շարունակելով երանաշնորհ Հայրապետի
կյանքին ու գործունեությանը նվիրված մեր
հոգրվածաշարը՝ ներկա համարում ընթերցողին
կներկայացնենք Գարեգին Հովսեփյանի եպիսկոպոսական ձեռնա-
դրությանը նախորդած երեք տարիների (1914-1917 թթ.) գրեթե չլուսա-
բանված գործունեությունը, որ նա ծավալել է որպես Էջմիածնի Եղբայ-
րական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահ և
Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ: Առանձին մանրամասնությամբ

* Հոդվածն ընդունվել է տպագրության 08.03.2020:

¹ Տես **Մելքոնյան Ռ. Ռ.**, Գարեգին Ա Հովսեփյան. Երանաշնորհ Հայրապետն ու մեծ գիտնականը. Մաս Ա: Ուսում-
նառության տարիները (1877-1897 թթ.), «ՎԷՄ», Եր., 2018, N 1 (61), էջ I-XXIX, Գարեգին Ա Հովսեփյան. Երանա-
շնորհ Հայրապետն ու մեծ գիտնականը. Մաս Բ: Բարենորոգչական ծրագրերը (1897-1917 թթ.), «ՎԷՄ», Եր.,
2018, N 2 (62), էջ I-XV, Գարեգին Ա Հովսեփյան. Երանաշնորհ Հայրապետն ու մեծ գիտնականը. Մաս Գ: Բարե-
նորոգչական ծրագրերը գիտակրթական ոլորտում, «ՎԷՄ», Եր., 2018, N 3 (63), էջ I-XX:

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020

ներկայացնելու ենք 1917 թ. գարնանը Գարեգին Հովսեփյանի կատարած ճանապարհորդություն-դրամահավաքը՝ հանուն ճեմարանի պահպանության և որբերի խնամքի: Այդ կապակցությամբ հրապարակելու ենք մինչ օրս անտիպ մի վավերագիր, որում Հովսեփյանը Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսին է ներկայացնում իր ճանապարհորդության արդյունքները:

1. Գարեգին վարդապետ Հովսեփյանն Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահ

1914 թ. սկսված Առաջին աշխարհամարտը, դառնալով մարդկության պատմության ամենաաղետալի շրջափուլերից մեկը, իր անդառնալի կնիքը թողեց հատկապես հայ ժողովրդի ճակատագրի վրա: Պատերազմի ստեղծած իրադրությունից օգտվելով էր, որ ժամանակի թուրքական իշխանությունները կազմակերպեցին Հայոց ցեղասպանությունը, որի հետևանքով, մարդկային մեծաթիվ կորուստներից զատ, հայությունը կորցրեց նաև իր պատմական հայրենիքի մեծագույն մասը:

Չարդերի հետևանքով գաղթականության ճանապարհը բռնած հայության մի ստվար հատվածն իր փրկությունը գտել էր Ս. Էջմիածնի պատերի մոտ՝ հագարավոր որբեր, սովյալներ, որոնք կազմակերպված խնամքի և օգնության կարիք ունեին: Կանխագգալով հայությանը սպասվող մոտալուտ աղետը՝ Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսն արդեն 1914 թ. նոյեմբերի 22-ի կոնդակով, որն ուղղված էր թեմական առաջնորդներին, հրահանգում էր մի շարք վայրերում բացել Եղբայրական օգնության հանձնաժողովներ²: Իսկ արդեն նույն թվականի դեկտեմբերի 28-ին հրապարակված կոնդակով³ հիմնվում էր Վաղարշապատի Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովը⁴: Այս հանձնաժողովը պետք է դառնար Եղբայրական օգնության բոլոր հանձնաժողովներին համախմբող և իրար կապող օղակը, որը միաժամանակ պետք է զբաղվեր Վաղարշապատի գավառում ապաստանած գաղթականների խնամքով⁵: Հիշյալ կոնդակով գլխավոր կարգադիր հանձնաժողովին Գևորգ Ե կաթողիկոսի կողմից տրվում էին հետևյալ հրահանգները.

ա) հավաքել տեղեկություններ հայ գաղթականների մասին,

2 Տե՛ս **Եփրիկյան Ա.**, Եղբայրական Օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին, «Էջմիածին» հանդես, Ս. Էջմիածին, 2015, N 7, էջ 57:

3 Այս կոնդակը տե՛ս **Այս կոնդակը տե՛ս**՝ «Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 3, գ. 73, թ. 147-148, շրջ.:

4 Տե՛ս՝ **Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին (1914-1920): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, հատ. Ա (1914-1917), կազմ. Գ. Ավագյան, Ս. Էջմիածին, 2018, էջ 190-191: Հմտ. Եփրիկյան Ա., նշվ. աշխ., էջ 57:**

5 Տե՛ս՝ **Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին...., հատ. Ա, էջ 191:**

բ) քննել և կենտրոնական իշխանությանը զեկուցել գաղթականների ընդհանուր վիճակի մասին,

գ) բանակցությունների մեջ մտնել Եղբայրական օգնության բոլոր հանձնաժողովների հետ, ստանալ տեղեկագրեր և նրանց փոխանցել գաղթականների մասին տեղեկություններ,

դ) Եղբայրական օգնության բոլոր հանձնաժողովների գործունեությունը միավորել և հարկ եղած դեպքում նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ համագումար հրավիրել,

ե) խորհրդակցել մերձակա հանձնաժողովների հետ գյուղերում գաղթականներ տեղավորելու մասին,

զ) խնամել և բժշկական օգնություն ցուցաբերել գաղթականներին⁶:

Գաղթականությանն օգնելու աշխատանքներն այս տրամաբանությամբ կազմակերպելով՝ հնարավոր էր դառնում օրգանական կապ ստեղծել Հայաստանի տարբեր շրջաններում գործող Եղբայրական օգնության հանձնաժողովների միջև և հնարավորինս արդյունավետորեն բաշխել հայության տարբեր հատվածներից եկող նվիրատվություններն օրեցօր ավելացող գաղթականներին:

Ինչպես տեղեկանում ենք Գարեգին Հովսեփյանի մասին տարբեր հուշագրություններից, Առաջին աշխարհամարտի սկսվելու ժամանակ նա ճանապարհորդում էր Մերձավոր Արևելքի, ապա՝ Հայաստանի արևմտյան հատվածի տարբեր քաղաքներով՝ ուսումնասիրելով այդ վայրերում պահվող հին ձեռագրերն ու հնությունները⁷: Աշխարհամարտի սկսվելու պահին նա թուրքական տիրապետության տակ գտնվող Մեքաստիայում էր, ուր գնացել էր տեղում պահվող ձեռագրերն ուսումնասիրելու⁸: Իր աշակերտներից Հովսեփ Գրիգորյանի վկայությամբ՝ Գարեգին վարդապետը մեծ դժվարությամբ կարողանում է հասնել Սև ծովի Սամսուն նավահանգիստ, այնտեղից էլ՝ Բաթում, ապա՝ Էջմիածին⁹:

Ս. Էջմիածին վերադառնալուն պես Հովսեփյանը նվիրվում է հայությանը ֆիզիկական բնաջնջումից փրկելու գործին: Գևորգ Ե-ի 1915 թ. մարտի 21-ի կոնդակով¹⁰ Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովը վերակազմավորվում է Հայ գաղթական գործի կենտրոնական տեղեկատու մարմնի, որի կազմում պետք է ընդգրկվեին հայկական տարբեր կոմիտեներից, ընկերություններից և հանձնաժողովներից ընտրված ու Վեհափառ Հայ-

6 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 73, թ. 147-148, շրջ.: Հմմտ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին..., հատ. Ա, էջ 191:
7 Տե՛ս Խմբագրական. Հայրապետական Պատուիրակը, «Սիոն», N 2, Երուսաղեմ, 1935, էջ 38: Գրիգորյան Հ., Հիշողություններ Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի մասին, «Էջմիածին» հանդես, Ս. Էջմիածին, 1947, N Ա-Բ, էջ 25:
8 Տե՛ս Գրիգորյան Հ., նշվ. աշխ., էջ 25:
9 Տե՛ս նույն տեղում, էջ 25:
10 Կոնդակը տե՛ս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին..., հատ. Ա, էջ 223-225:

րապետի կողմից հաստատված ներկայացուցիչներ¹¹: Մասնավորապես հանձնաժողովի առաջին կազմում ընդգրկված էին Ս. Էջմիածնի հանձնաժողովից Բագրատ Եպիսկոպոսը, Մաթևոս Եպիսկոպոսը, Գարեգին վրդ. Հովսեփյանը և Բարգեն վրդ. Աղավեյանը, Երևանի հանձնաժողովից՝ Խորեն Եպս. Մուրադբեկյանը, Վասիլ Եղիազարյանը, Գրիգոր Տեր-Խաչատրյանը և Արշակ Զիլինգարյանը, Թիֆլիսի հայոց բարեգործական կոմիտեից՝ Հովհաննես Սաղաթեյանը և Պողոս Կանդուրայանը, Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունից՝ Գաբրիել Պապյանը, Նոր Նախիջևանի հայկական կոմիտեից՝ բժիշկ Անդրեաս Սալթիկյանը, Պետերբուրգի հանձնաժողովից՝ Գևորգ Ամիրյանը, և Մոսկվայի հայկական կոմիտեից՝ Յ. Խաչատրյանը¹²:

Ըստ Ս. Էջմիածնի գլխավոր կարգադիր հանձնաժողովի 1915 թ. մարտի 1-ի զեկույցի՝ 1914 թ. վերջերին և 1915 թ. սկզբներին գաղթականությունը գալիս էր երեք հիմնական ուղղությամբ՝ «Պարսկաստանից՝ Չուլֆայի վերայով, Տանկաստանից՝ Իգդիրի և Սարիղամիշ-Կարսի վերայով և պիտի անցնեին Երևանի թեմը»¹³: Ելնելով այն հանգամանքից, որ գաղթականների մեծ մասը, անցնելով սահմանը, Իգդիրով պետք է հասներ Էջմիածին, Երևանի հանձնաժողովը կարգադրում է սննդատու կայան հիմնել Մարգարա գյուղում, իսկ Գևորգ Ե կաթողիկոսի հրահանգով Իգդիր և Մարգարա է մեկնում Գարեգին վարդապետ Հովսեփյանը՝ գաղթականների տեղափոխման գործը կազմակերպելու համար¹⁴, ինչը հաջողվում է իրականացնել մեծ դժվարությամբ:

Ամենայն Հայոց կաթողիկոսի 1915 թ. սեպտեմբերի 17-ի կոնդակով **Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահ է նշանակվում Գարեգին վարդապետը**¹⁵, որը, չնայած այն հանգամանքին, որ այդ ժամանակ նաև Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչն էր, այնուամենայնիվ ջանք ու եռանդ չէր խնայում հայ գաղթականությանը և հատկապես որբերին փրկելու համար: Առաջին խնդիրներից մեկը, որին Հովսեփյանը բախվում է, Էջմիածնի կլիմային անսովոր լինելու հետևանքով գաղթականության մեջ օր օրի ավելացող մահացություններն էին: Նա այս խնդիրը լուծում էր ժողովրդին Էջմիածնից նախալեռնային շրջաններ տեղափոխելով, ինչի հետևանքով մահացությունների թիվը զգալիորեն նվազում է¹⁶: Գարեգին վարդապետը, օգտվելով այն հանգամանքից, որ Գևորգյան ճեմարանի տեսուչն էր, ուսումնական հաստատությունն իր հարակից բոլոր շինություններով տրամադրում է հիվանդների ու որբ երեխաների տեղավորման համար, և,

11 Տե՛ս Եփրիկյան Ա., նշվ. աշխ., էջ 57:

12 Տե՛ս նույն տեղում:

13 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին..., հատ. Ա, էջ 189:

14 Տե՛ս նույն տեղում, էջ 189, 191:

15 Տե՛ս Գարեգին Ա Յովսեփեան, Փաստաթղթերի եւ նիսերի ժողովածու, հատ. Ա, կազմող՝ Գ. Աւագեան, Ս. Էջմիածին, 2017, էջ 191 (այսուհետ Գարեգին Ա Հովսեփյան, Վավերագրեր, հատ. Ա):

16 Տե՛ս Գրիգորյան Հ., նշվ. աշխ., էջ 25-26:

ինչպես նշում է Հովսեփյանի այդ ժամանակվա աշակերտներից Հովսեփ Գրիգորյանը, «1915-1916 ուս-տարում ճեմարանն իր սաների համար փակ մնաց, բայց դրա փոխարեն հազարավոր որբ երեխաներ փրկվեցին»¹⁷: Հետագայում որբերը տեղափոխվում են Երևան և այլ վայրեր, իսկ Գևորգյան ճեմարանը 1916-1917 ուստարում կրկին վերսկսում է իր աշխատանքները:

Գարեգին ծ. վրդ.¹⁸ Հովսեփյանը Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահությունը վարում է մինչև 1916 թ. օգոստոս, և այդ ընթացքում, բազմաթիվ այլ գործերից գատ, հանձնաժողովի ջանքերով կատարվում են նաև հետևյալ աշխատանքները.

ա) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գաղթականության և հայրենագրության հետևանքով կարող էին անդառնալի կորստյան մատնվել արևմտահայերի տարազը, տարբեր վայրերին հատուկ ծեսերն ու ավանդությունները, ինչպես նաև մշակութային կարևորություն ունեցող այլ արժեքներ, որոշում է կայացվում մասնագետների խորհրդատվությամբ գնելու և Մայր Աթոռի թանգարանի պահպանությանը հանձնելու տարազներ, զարդեր ու արվեստի այլ նմուշներ: Իսկ աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով Գարեգին վրդ. Հովսեփյանի գլխավորությամբ, Գևորգյան ճեմարանի ուսուցչական վարչության աշխատանքներով կազմվում է սահմանված բյուջե ունեցող առանձին վարչություն, որը պետք է կատարեր նշված գործը¹⁹:

բ) 1915 թվականի աշնանը զգացվում է գաղթականներին, ի թիվս այլ հարմարությունների, տաք և հարմար հագուստով ապահովելու խիստ մեծ կարիք: Թեև որոշակի քանակությամբ հագուստ արդեն իսկ ստացվել էր տարբեր վայրերից, սակայն դրանք հիմնականում հնոտիներ էին և բավարար չէին ըստ անհրաժեշտության կարիքավորներին բաժանելու համար: Ուստի որոշում է կայացվում 1915 թ. նոյեմբերի 28-ից բացելու Աշխատանքի տուն, որը պետք է աշխատանքով ապահովեր նաև բազմաթիվ գաղթական կանանց²⁰:

գ) Գաղթականության մեծ մասը, որի մեջ քիչ թիվ չէին կազմում դպրոցական տարիքի երեխաները, հավաքված էր Վաղարշապատի գավառում: Նրանց շարունակվող հոսքի պայմաններում անհրաժեշտ է դառնում նաև այդ երեխաների ուսման հարցի կազմակերպումը: Այս հարցի լուծման նպատակով Վաղարշապատի հայոց եկեղեցական-ծխական դպրոցներին կից բացվում է գաղթական երեխաների համար նախատեսված դպրոց²¹:

1916 թվականի սեպտեմբերից Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահ է նշանակվում Գևորգ վարդապետ Չո-

17 Նույն տեղում, էջ 25-26:

18 Գարեգին վրդ. Հովսեփյանը ծայրագլխության աստիճան է ստանում 1916 թ. մարտի 8-ին՝ ձեռամբ Ս. Ներսես եպս. Մելիք-Թանգյանի (տե՛ս Գարեգին Ա Հովսեփյան, Վավերագրեր, հատ. Ա, էջ 206-207):

19 Տե՛ս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին..., հատ. Ա, էջ 375:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 374-375, 436-438:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 440-441:

րեքյանը, իսկ Գարեգին ծ. վարդապետ Հովսեփյանը՝ որպես Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ, պետք է զբաղվեր դժվարագույն կացության մեջ հայտնված կրթարանի աշխատանքներով²²:

2. Հանգանակություն Գևորգյան հոգևոր ճեմարանի պահպանման համար

Գարեգին Հովսեփյանը Գևորգյան ճեմարանի տեսչությունը ստանձնել է երկու տարբեր ժամանակներում. առաջին անգամ՝ Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի օրոք՝ 1905-1906 թթ., երբ նա իր գաղափարակից ընկերների հետ կրթական ոլորտի բարեկարգման մի շարք ծրագրեր էր առաջարկում: Սակայն քանի որ նրանց գաղափարներն անընդհատ դառնում էին բանակալի առարկա, նա հրաժարվում է այդ ժամանակ ճեմարանում իշխող մտայնության պայմաններում իրենց գործունեությունը շարունակելուց²³: Երկրորդ անգամ նա Գևորգյան ճեմարանի տեսչությունը վարել է մինչև 1915 թ. դրա փակվելը, երբ ժամանակի կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցից վերջապես ստանում է կրթարանի բարեկարգմանն ուղղված իր ծրագրերն իրականացնելու թույլտվություն²⁴: Սակայն այս անգամ Գարեգին ծ. վրդ. Հովսեփյանի ծրագրերի իրականացմանը խոչընդոտում են այն դժնդակ պայմանները, որոնց մեջ հայտնվել էր հայ ժողովուրդը 1914-1920 թթ.: Ստանձնելով Գևորգյան ճեմարանի տեսուչի պաշտոնը՝ Հովսեփյանն անմիջապես բախվում է Ս. Էջմիածին եկող գաղթականների խնդրին, որոնց կարիքները հոգալու համար նույնիսկ ստիպված է լինում ժամանակավորապես դադարեցնել ճեմարանի ուսումնական պրոցեսը: Չնայած այն հանգամանքին, որ 1916 թ. օգոստոսին նա ազատվում է Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահի պաշտոնից և հնարավորություն է ստանում ամբողջությամբ նվիրվելու կրթական գործին, այնուամենայնիվ, այս անգամ լրջագույն մարտահրավեր են դառնում ճեմարանի՝ ընդհանուր դրությունից բխող ֆինանսական խնդիրները: Իսկ 1916 թ. վերջերից դրան գումարվում է ցարական Ռուսաստանում տիրող հեղափոխական մթնոլորտը, որն իր արձագանքն էր ունենում նաև Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում:

Փորձելով որևէ կերպ փրկել հայ իրականության մեջ այդ ժամանակ գործող միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Գարեգին ծ. վարդապետը, Գևորգ Ե կաթողիկոսի 1916 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 2842 կոնդակի համաձայն, ռուսական տիրապետության տակ գտնվող հայաբնակ մի

22 Գևորգյան հոգևոր ճեմարանում Գարեգին Հովսեփյանի տեսչական աշխատանքների մասին տե՛ս **Մելքոնյան Ս. Ռ.**, Գարեգին Ա Հովսեփյան. Երանաշնորհ Հայրապետն ու մեծ գիտնականը. Մաս Գ, էջ I-XX:

23 Ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ VI-XII:

24 Այս մասին տե՛ս նույն տեղում, էջ XII-XVI:

շարք խոշոր քաղաքներում նախաձեռնում է ճանապարհորդություն-դրամահավաք²⁵: Նշված կոնդակով, որն ուղղված էր Թիֆլիսի, Բաքվի, Արմավիրի, Եկատերինոդարի, Նոր Նախիջևանի, Մոսկվայի և Ս.Պետերբուրգի հայերին, ներկայացվում էին Մայր Աթոռի և Գևորգյան հոգևոր ճեմարանի տազնապալից դրությունն ու մեծաքանակ ծախսերը և կոչ էր արվում դրամական նվիրատվություններով օգնելու, որպեսզի «Ճեմարանը կարողանայ անթերի շարունակել պահպանել իւր գոյութիւնը՝ մատակարարելով հայ ուսումնածարաւ երիտասարդութեան լոյս-գիտութիւն»²⁶:

Գարեգին Հովսեփյանի կյանքի այս փոքր, բայց, մեր կարծիքով, կարևոր նշանակություն ունեցող ժամանակահատվածի մասին մենք իմանում ենք նրա օրագրի²⁷ անտիպ էջերից, որում առկա հիշատակության համաձայն՝ հանգանակության նպատակով նախաձեռնած ճանապարհորդությունն ընթացել է **երկու փուլով 1917 թ. փետրվարի 24 - ապրիլի 11 և նույն թվականի ապրիլի 30 - հունիսի 14**²⁸: Չնայած այն հանգամանքին, որ ծրագրված էր դրամահավաք կազմակերպել Վեհափառ Հայրապետի վերոնշյալ կոնդակում հիշատակված բոլոր քաղաքներում, այնուամենայնիվ, ժամանակի սղության և 1917 թ. Փետրվարյան հեղափոխության պատճառով հաջողվում է այն իրականացնել միայն Ս. Պետերբուրգում և Մոսկվայում:

Ռուսաստանում հանգանակության գործը կազմակերպելուց բացի՝ Գարեգին Հովսեփյանը հնարավորություն է ունենում մոտիկից ծանոթանալու և շփվելու երկու մայրաքաղաքների հայ և օտարազգի մտավորականության երևելի ներկայացուցիչների հետ, որպիսիք էին Նիկողայոս Մառը, կոմսուհի Ուվարովան, Վալերի Բրյուսովը, նկարիչներ Վարդգես Սուրենյանցն ու Տարագրոս Տեր-Վարդանյանը, Յու. Վեսելովսկին, Հակոբ և Աբրահամ Ղուկասյանները, Հովսեփ Օրբելին և այլք: Իսկ Ռուսաստանում գտնվելու առաջին իսկ օրերից Հովսեփյանին իր առաքելությունն իրականացնելու գործում մեծ օգնություն են ցուցաբերում այն ժամանակներում արդեն ականավոր գիտնական Նիկողայոս Ադոնցը, ուսուցչապետ Վարդան Վարդանյանն ու Մենտոր Ռոստոմյանը:

Իր ճանապարհորդության առաջին փուլը, որը համընկնում է Փետրվարյան հեղափոխության հետ, Գարեգին ծ. վարդապետը գրեթե ամբողջությամբ

վե՛ր համահայկական հանդես, ժԲ (ժԸ) 404րի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020

25 Այս ճանապարհորդության և դրամահավաքի մանրամասները տես **Գարեգին Հովսեփյանի** օրագիրը, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթ. 91, վավ. 5, եր. 1ա-32բ (այսուհետ՝ **Գարեգին Հովսեփյանի** օրագիրը): Հովսեփյանի օրագրի մասին տե՛ս **Քոչվերյան Ա.**, Գարեգին Հովսեփյանի անտիպ օրագիրը, «Գրական թերթ», Եր., 1968, օգոստոսի 9, էջ 2:
26 Նորին Վեհափառութեան տնօրինություններից, «Արարատ» ամսագիր, Ս. Էջմիածին, 1917, N Ա, էջ 20:
27 Օրագրի ձեռագիրն ամբողջությամբ տե՛ս Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթ. 91, վավ. 5: Հովսեփյանի օրագրի մասին տես նաև **Քոչվերյան Ա.**, նշվ. աշխ., էջ 2: **Աղամյան Ավ.**, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի օրագիրը և հուշերը, «Էջմիածին» հանդես, Ս. Էջմիածին, N ԺԱ, 1970, 50-55: **Ուլուբաբյան Բ.**, Հայագետ ու հոգևորական մեծ գործիչ Գարեգին Հովսեփյանի ձեռագիրը, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1989, N 3 (85), էջ 105-109:
28 Տես **Գարեգին Հովսեփյանի** օրագիրը, եր. 29ա:

անցկացնում է Ս. Պետերբուրգում, որտեղ նրա ծավալած շուրջ մեկուկես ամսվա գործունեության երկու հիմնական ուղղություն կարելի է առանձնացնել:

Առաջին տեղում, անշուշտ, Մայր Աթոռի տարբեր հաստատությունների, մասնավորապես Գևորգյան հոգևոր ճեմարանի գործունեության շարունակականությունն ապահովելու համար նախատեսված հանգանակությունն էր: Այս գործը լավագույնս կազմակերպելու համար Գարեգին Հովսեփյանը դեռևս մարտի սկզբին, երբ նոր էր ժամանել Ս. Պետերբուրգ, տեղի եկեղեցական խորհրդին մանրամասն ներկայացնում է Ս. Էջմիածնում տիրող իրավիճակը. «Բացատրեցի Մ. Աթոռի նյութական վիճակը կալվածների վիկուպի և թանկության հետևանքով, բացատրեցի, թե ինչպիսի սուղ պայմանների մեջ ապրում է վեհարանը, միաբանությունը, հիշեցի ամեն մեկի ստացած ռոճիկը, որպեսզի ավելի պարզ լինի, թե ինչպես Ս. Աթոռը ինքն ապրում է աղքատության մեջ, որպեսզի յուր հաստատությունները պահել կարողանա: Մ. Աթոռը միլիոններ է ծախսել ճեմարանը պահելու համար, ազգը պետք է օգնության հասնի, եթե նորա համար թանկ են այդ հաստատությունները»²⁹:

Լսելով Գարեգին վարդապետի զեկույցը՝ խորհրդի անդամները հայտնում են իրենց որոշումը՝ ըստ կարելիվոյն օգնելու նրան իր առաքելության իրականացման գործում: Նույնիսկ պատրաստակամություն են հայտնում մշտական նպաստի տեսքով սահմանված չափով որոշակի գումար տրամադրելու Մայր Աթոռին³⁰: Եկեղեցական խորհրդի ժողովից հետո Հովսեփյանը Նիկողայոս Ադոնցի հետ փորձում է կազմել ժողովարարության հետագա ընթացքը կազմակերպելու ծրագիր: Սակայն, ինչպես Գ. Հովսեփյանն է նշում, աստիճանաբար պարզ է դառնում, որ մարդկանց զբաղվածության պատճառով շատ դժվար է նրանց համախմբել և խոսել առկա խնդիրների լուծումների մասին: Ելնելով այս իրավիճակից՝ Գարեգին Հովսեփյանը որոշում է անձամբ այցելել մարդկանց և ներկայացնել իր առաքելությունը:

Ինչպես իմանում ենք իր օրագրից, Հովսեփյանը 1917 թ. մարտի 9-ից ապրիլի 4-ն ընկած ժամանակահատվածում բազմաթիվ հանդիպումներ է ունենում Պետերբուրգի այդ ժամանակվա հայազգի անվանի ընտանիքների ներկայացուցիչների հետ³¹: Բոլորի հետ անհատական շփումների ժամանակ նա հանգամանալից ներկայացնում է Ս. Էջմիածինն իր մշակութային և կրթական կառույցներով՝ շեշտելով հատկապես ճեմարանի, մատենադարանի և թանգարանի կարևորությունը: Հանգանակության կազմակերպման գործում Գ. Հովսեփյանին մեծագույն օգնություն է ցույց տալիս Ս. Պետերբուրգի հայկական ակումբը, որը նա բնորոշում է «կենդանի մի ժողովարան» արտահայ-

29 **Զաքարյան Ա.**, Գարեգին Հովսեփյանի և Տիրայր Տեր-Հովհաննիսյանի նամակագրությունից, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1985, N 5, էջ 81:

30 Տե՛ս նույն տեղում, էջ 81:

31 Տե՛ս **Գարեգին Հովսեփյանի** օրագիրը, 1ա-16ա:

տությամբ³²։ Առհասարակ իր օրագրում Գարեգին Հովսեփյանը բազմիցս անդրադառնում է հիշյալ ակումբին, որտեղ պարբերաբար հավաքվում էին Պետերբուրգի հայության տարբեր ներկայացուցիչներ, կազմակերպվում էին դասախոսություններ, մտերիմ ընթրիքներ, և քննարկվում էին ներազգային տարբեր խնդիրներ։ Հովսեփյանը հատկապես կարևորում էր մարտի 22-ին տեղի ունեցած Մենտոր Ռոստոմյանի դասախոսությունը, որով բանախոսն ունկնդիրների ուշադրությունը հրավիրում էր պատերազմից հետո ստեղծվելիք անկախ հայկական պետականության հեռանկարների վրա³³։ Գարեգին Հովսեփյանն ինքը հաճախ էր այդ ակումբում հանդես գալիս զեկուցումներով՝ հայ մշակույթի տարբեր թեմաների, Ս. Էջմիածնի, Գևորգյան ճեմարանի և Մայր Աթոռի այլ կառույցների մասին։ Այդպիսի բանախոսություններով նա ոգևորում էր տեղի հայությանը և բացատրում, թե ինչ կարևորություն ունի յուրաքանչյուրի նվիրատվությունը հայ ժողովրդի հոգևոր-կրթական գործում մեծ նշանակություն ունեցող նշված հաստատությունների գործունեության անխափան ընթացքի համար։

Հանգանակության ընթացքում Ս. Պետերբուրգում Գարեգին Հովսեփյանի ծավալած գործունեության մյուս մասն ամբողջությամբ գիտագործնական ուղղվածություն ուներ։ Դեռևս 1902 թվականից դառնալով Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության Կովկասի բաժանմունքի³⁴, իսկ 1912 թվականից՝ Ս. Պետերբուրգի կայսերական հնագիտական ընկերության իսկական անդամ³⁵, Գարեգին վարդապետն արդեն որոշակի համբավ ուներ ռուսական ակադեմիական շրջանակներում։ Նա հատկապես մտերիմ հարաբերությունների մեջ էր ակադեմիկոս Նիկողայոս Մառի հետ։ Նրանք հաճախ էին հանդիպում և քննարկում հայագիտությանը վերաբերող տարբեր հարցեր։ Առանձնապես հետաքրքիր էր երկու գիտնականների՝ 1917 թ. մարտի 23-ին տեղի ունեցած հանդիպումը, որի ժամանակ նրանք զրուցել են հայկական պետականության վերստեղծման մասին՝ քննարկելով բաժանված Հայաստանի միավորման և մեկ միացյալ պետության ձևավորման հնարավորությունը³⁶։

Պետերբուրգում գտնվելու օրերին Գարեգին վարդապետը Մառին է ներկայացնում նաև իր նոր ձեռագրական գյուտերը՝ Օրիգենեսի մի քանի ճառերը, Ստեփանոս Սյունեցու չորս ավետարանիչների և Եզեկիելի մեկնությունը, ապա՝ Ոսկեբերանի, Եփրեմի, Կյուրեղ Ալեքսանդրացու մեկնությունները, որ հայ բանասիրությանն այն ժամանակ դեռ հայտնի չէին։ Գիտական այս հայտնագործություններն առանձնահատուկ կարևորություն ունեին նաև այն պատճառով,

32 Տե՛ս նույն տեղում, 9բ-10ա։

33 Տե՛ս նույն տեղում։

34 Տե՛ս **Բանասեր**, Անտիպ վավերագրեր լուսահոգի Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի կենսագրության համար, «Էջմիածին» ամսագիր, Ս. Էջմիածին, 1952, N Է, էջ 41։

35 Տե՛ս **Զաքարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 80։

36 Տե՛ս **Գարեգին Հովսեփյանի** օրագիրը, եր. 9բ-10ա։

որ դուրս էին բերվել Արևմտահայաստանից բերված ձեռագրերից³⁷: Գարեգին վարդապետի բանասիրական գյուտերը, որոնց մասին նա մի կարճ հրապարակում էր արել «Արարատ» հանդեսում³⁸, շատ են ուրախացնում ակադեմիկոս Մատին, որն էլ այդ հրապարակումը թարգմանում է ռուսերեն և առանձին գեկույցի տեսքով ներկայացնում մարտի 24-ին Ս. Պետերբուրգի կայսերական հնագիտական ընկերության՝ հայագիտությանը նվիրված նիստին³⁹: Ըստ Հովսեփյանի օրագրի՝ նիստին մասնակցել է նաև Հովսեփի Օրբելին՝ հանդես գալով Թիֆլիսի Ս. Գևորգ եկեղեցու արձանագրությունների մասին գեկույցով:

Ս. Պետերբուրգում անցկացրած օրերին Գարեգին վարդապետի գիտական հետաքրքրությունները չեն սահմանափակվում միայն Կայսերական հնագիտական ընկերության և դրա անդամների հետ շփումներով: Նա հայ մշակույթին և մասնավորապես կիրառական արվեստին նվիրված բանախոսություններով հանդես է գալիս նաև քաղաքի հայկական ակումբում: Այդ բանախոսություններից հիշատակելի է մարտի 11-ի գեկույցը, որի ժամանակ հավաքված մեծաթիվ բազմությանը վարդապետը բացատրում է հայ եկեղեցու կոչումը, դաստիարակչական, սոցիալական և գիտամշակութային հաստատությունների գործունեությունը՝ շեշտադրելով հատկապես **ճեմարանի, մատենադարանի և թանգարանի** նշանակությունը: Նա մանրամասն պատմում է, թե ինչ աշխատանքներ են կատարվում փրկված հնությունների, ազգագրական և մշակութային այլ արժեքավոր նմուշների ուսումնասիրման և պահպանման ուղղությամբ: Չուտ գիտաճանաչողական նշանակությունից բացի՝ այդպիսի բանախոսությունները մեծապես նպաստում էին նաև հանգանակության գործին, քանի որ հստակ, շոշափելի արդյունքներով ցույց էին տալիս կատարվող աշխատանքների կարևորությունը:

Որպես մշակույթի նվիրյալ հետազոտող՝ Գարեգին վարդապետը Պետերբուրգում աշխատանքներ է տանում նաև հայկական արվեստի ուսումնասիրման և հանրայնացման ուղղությամբ: Նա հանդիպում ու պայմանավորվածություններ է ձեռք բերում նկարիչներ Վարդգես Սուրենյանցի և Տարագրոս Տեր-Վարդանյանի հետ: Որոշվում է նկարչից, ճարտարապետից և լուսանկարչից կազմված մի արշավախումբ կազմել, որն իր գործունեությունը պետք է սկսեր Աղթամարի վանքից՝ ուսումնասիրելով նրա ճարտարապետությունն ու քանդակագործությունը: Ստացված նյութերը պետք է հրատարակվեին հայ գաղթականությանը նվիրված առանձին հատորում:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով Ս. Պետերբուրգում անցկացրած իր օրերը թե՛ հանգանակության իրականացման, թե՛ հասարակական-գիտական տարբեր նախաձեռնություններ կազմակերպելու և պլանավորելու տե-

37 Տե՛ս նույն տեղում, եր. 1բ:

38 Գարեգին ծ. վրդ. Հովսեփյանի հայտնաբերած նոր ձեռագրերի մասին տե՛՛ս **Յովսեփյան Գ. ծ. վրդ.**, Ձեռագրական նորություններ (նախնական հաղորդագրություն), «Արարատ», Ս. Էջմիածին, 1917, N Բ-Գ, էջ 193-198:

39 Տե՛ս **Գարեգին Հովսեփյանի** օրագիրը, եր. 11ա:

սանկյունից՝ Գարեգին Հովսեփյանը Տիրայր վարդապետին ուղղված իր նամակում հույս էր հայտնում, որ Մոսկվայում էլ նույն հաջողություններն ունենալու դեպքում իրեն կհաջողվի հանգանակել անհրաժեշտ գումարը՝ Գևորգյան ճեմարանի գործունեությունն ապահովելու նպատակով:

Ս. Պետերբուրգի իր ճանապարհորդությունը Գարեգին վարդապետն ընդհատում է 1917 թ. ապրիլի 4-ին, երբ հեռագիր է ստանում Կաթողիկոսական դիվանից՝ անհապաղ վերադառնալու Էջմիածին եպիսկոպոսական ձեռնադրության համար⁴⁰:

Արագ կարգավորելով կիսատ մնացած գործերը՝ Հովսեփյանն ուղևորվում է Հայաստան և ապրիլի 11-ին ներկայանում Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին, որն իր գոհունակությունն է հայտնում կատարված հանգանակության և այլ աշխատանքների արդյունքների համար և տեղեկացնում, որ մտադիր է Գարեգին Ծ. վարդապետին արժանացնել եպիսկոպոսի կոչման:

Ձեռնադրությունը տեղի է ունենում 1917 թ. ապրիլի 16-ին⁴¹: Գարեգին Ծ. վրդ. Հովսեփյանից բացի՝ այդ օրը եպիսկոպոս են ձեռնադրվում նաև Գևորգ վրդ. Չորեքյանը և Տիրայր վրդ. Տեր-Հովհաննիսյանը:

Եպիսկոպոսական ձեռնադրությունից հետո Գարեգին Հովսեփյանը մտադիր էր անմիջապես վերադառնալ հանգանակության գործին, սակայն ճեմարանում ծագած որոշ խնդիրների պատճառով Մայր Աթոռից կարողանում է մեկնել միայն ապրիլի 30-ին: **Այս անգամ ճանապարհորդության հիմնական ուղղությունը պետք է լիներ Մոսկվան:**

Չնայած այն հանգամանքին, որ Գարեգին Հովսեփյանն իր օրագրում Մոսկվայում նույնպես հանգանակությունը հաջողությամբ անցկացնելու հույս էր հայտնում, այնուամենայնիվ, այստեղ պատկերն այլ էր: Ինչպես ինքն է նշում իր օրագրում և Տիրայր եպս. Տեր-Հովհաննիսյանին ուղղված 1917 թ. մայիսի 18-ի և 30-ի նամակներում⁴², ռուսական պետության ներսում ստեղծված քաղաքական իրավիճակն ապագայի նկատմամբ անորոշություն էր առաջացրել, ինչն իր ազդեցությունն էր թողել մոսկվայաբնակ հայերի վրա. «Պետք է ասել ժամանակն էլ անհարմար է. ապագայի անորոշությունը, երկրի խառնակ վիճակը, մինիստրական տազնապը ևս իրենց տպավորությունն են թողնում մարդկանց հոգիների վերա. չգիտեն վաղը ի՞նչ կբերե, հնարավորություն կունենա՞ն իրենց գործերը շարունակելու, որևէ դժբախտություն չի՞ պատահիլ»⁴³: Այնուամենայնիվ, Հովսեփյանը փորձում է Մոսկվայի առավել նշանավոր հայ ընտանիքների հովանավորությամբ կազմակերպել անհրաժեշտ հանգանակությունը:

40 Տե՛ս Գարեգին Հովսեփյանի օրագիրը, եր. 15բ-16բ: Եպիսկոպոսական ձեռնադրության մասին տե՛ս նաև «Գևորգ Ե-ի կրոնական ու Գարեգին Ծ. վարդապետի եպիսկոպոսական աստիճան ստանալու եղմանագիրը», Գարեգին Ա Հովսեփյան, Վավերագրեր, հատ. Ա, էջ 249-252:

41 Տե՛ս նույն տեղում:

42 Նամակները տե՛ս Զաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 83-85:

43 Նույն տեղում, էջ 84:

Քաղաք ժամանելու առաջին իսկ օրը՝ 1917 թ. մայիսի 10-ին, նա հանդիպման պայմանավորվածություն է ձեռք բերում Հովհաննես Ժամհարյանի հետ, որի մասնակցությունից, ըստ Գարեգին եպիսկոպոսի, մեծապես կախված էր գործի հետագա ընթացքը. «Հետևյալ այցելություններս ցույց տվին, թե, հիրավի, Ժամհարյաններից շատ բան է կախված. եղել եմ Արզումանյանների, Գինջուղյանի, երկիցս Տարասյանների մոտ, և ամենքն էլ նրանց են սպասում և նրանց մասնակցության մասին հարցնում: Այս հիշյալ տների ներկայացուցիչներից արդեն լսել եմ, որ իրենք կմասնակցեն հանգանակության, բայց պետք է Ժամհարյանները գործի գլուխ անցնեն կամ առաջին օրինակը տան»⁴⁴:

Ժամհարյանի հետ հանդիպումը տեղի է ունենում 1917 թ. մայիսի 1-ին, սակայն նրանց խոսակցությունը, Հովսեփյանի բնորոշմամբ, վերածվում է հակաճառության: Հովհաննես Ժամհարյանը կտրականապես հրաժարվում է հանգանակությանը մասնակցելուց՝ տվյալ պայմաններում անժամանակ համարելով նոր հանգանակություն սկսելը: Նրա համոզմամբ՝ այդ գործը պետք է կազմակերպվեր պատերազմից հետո, սակայն Հովսեփյանը շարունակում էր բացատրել, որ «ամեն ժամանակ իւր պահանջներն ունի և քանի որ սկսուած է այս գործը, չպէտք է կիսատ թողնել, թէ առանց Ժամհարեանների մասնակցութեան այս գործը գլուխ չի գալէ»⁴⁵: Երկար պնդումներից հետո միայն Հովհաննես Ժամհարյանը խոստանում է իր եղբայրների հետ խորհրդակցել և վերջնական պատասխան տալ⁴⁶:

Մոսկվայում հանգանակության գործի համար լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծում նաև տեղի հայկական կոմիտեն և դրա նախագահ Ստեփան Մամիկոնյանը: Նրանք, նախապես իմանալով Գարեգին եպս. Հովսեփյանի առաքելության մասին, իրենք առանձին հանգանակության հայտարարություն էին արել, ինչն էլ ներկայացնում էին որպես պատճառաբանություն՝ Հովսեփյանին չօգնելու համար⁴⁷:

Չնայած այս բոլոր հիպոթափություններին՝ Գարեգին Սրբազանը թե՛ իր նամակներում՝ ուղղված Տիրայր եպիսկոպոսին, և թե՛ մեր կողմից բազմիցս հիշատակված օրագրում հույս էր հայտնում, որ, ինչպես Պետերբուրգում, Մոսկվայում նույնպես կկարողանա գործը հաջողությամբ պսակել:

Հիշատակության են արժանի նաև Գարեգին եպս. Հովսեփյանի հանդիպումները կոմսուհի Ուվարովայի հետ, որոնց ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվում Մոսկվայի հնագիտական ընկերության արժեքավոր հրատարակությունները փոխանակելու Ս. Էջմիածնի հրատարակությունների հետ: Սա մեծագույն հնարավորություն էր ստեղծում հարստացնելու Մայ-

44 Նույն տեղում, էջ 84:

45 Գարեգին Հովսեփյանի օրագիրը, եր. 16բ:

46 Տե՛ս նույն տեղում:

47 Տե՛ս **Ջաջարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 84-85: Հմմտ. Գարեգին Հովսեփյանի օրագիրը, եր. 29բ-30ա:

րավանքի մատենադարանն ու Գևորգյան ճեմարանի գրադարանը ժամանակի նշանավոր գիտական հրատարակություններով⁴⁸:

Շուրջ մեկ ամիս մնալով Մոսկվայում՝ Գարեգին Հովսեփյանն անձամբ հանդգնում է, որ ստեղծված պայմաններում այլևս իմաստ չունի շարունակել հանգանակությունը, իսկ ժամանակի տղության և Էջմիածին վերադառնալու անհրաժեշտության պատճառով ստիպված է լինում բավարարվել միայն Ռուսական կայսրության երկու մայրաքաղաքներ կատարած իր ճանապարհորդությամբ՝ հանգանակության ծրագրով նախատեսված մյուս քաղաքներ այցերը թողնելով ավելի հարմար ժամանակի:

Գարեգին Սրբազանն Էջմիածին է վերադառնում 1917 թ. հունիսին, որից հետո մանրամասն արձանագրություն է կազմում և Վեհափառ Հայրապետին է ներկայացնում իր ճանապարհորդության ընթացքում կատարած հանգանակության արդյունքները: Այդ անտիպ փաստաթուղթը մենք գտանք Երևանի Մատենադարանի արխիվում պահվող Գարեգին Հովսեփյանի օրագրում, որը հրապարակում ենք ստորև՝ կատարված աշխատանքների առավել ամբողջական պատկերը ներկայացնելու համար:

Գարեգին եպս. Հովսեփյանի հայտարարությունը Գևորգ Ե կաթողիկոսին՝ Մ. Պետրոբուրգում և Մոսկվայում կատարած հանգանակությունների վերաբերյալ⁴⁹

**Նորին Սրբութիւն Տ. Տ. Գևորգ Ե
Սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց**

Խոնարհ յայտարարութիւն

Զերդ Սրբութեան թ. 2842, 1916 թուի, դեկտ. 20 սրբատառ կոնդակով նուստութեանս վերայ պարտաւորութիւն էր դրուած ճեմարանի պահպանութեան և ապահովութեան համար հանգանակութիւն սկսել Պետրոգրադ և Մոսկուա, Նախիջևան, Արմաիր, Եկատերինոդար, Բագու և Թիֆլիս քաղաքներում: Զերդ Սրբութեան յայտնի պատճառներով յետաձգուեցաւ այդ ճանապարհորդութիւնը մինչև ներկայ թուականի փետր. 24-ը և տևեց առաջին անգամ մինչև Ապրիլի 11-ը, ապա երկրորդ անգամ Ապրիլի 30-ից մինչև յունիսի 14-ը:

Այս երկու ճանապարհորդութեան ժամանակ հնարաւոր եղաւ լինել ինձ միմիայն Պետրոգրադում և Մոսկուայում երկու անգամ: Մայրաքաղաքներում հանգանակութեան գործը դանդաղ ընթանալու պատճառով այլևս ժամանակ չգտայ շարունակելու գործը միւս քաղաքներում, մանաւանդ որ Զերդ Սրբութիւնը բանաւոր պատուիրել էր ինձ ներկայ լինել Մ. Աթոռում գումարուելիք եկեղեցականների համագումարին: Պետրոգրադում հանգանակութեան գործում ինձ

48 Տես Ջաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 84:
49 Գարեգին Հովսեփյանի օրագիրը, եր. 29ա-31բ:

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020

մեծապես նպաստեցին հայ ուսուցչապետներ Վարդան Վարդանեան և Ն. Ա. Գրոնց, ինչպես և պ. Մենտոր Ռոստոմեան, որոնց համար Ձերդ Սրբութեան օրհնութիւնը կհայցէի: Իսկ Մոսկուայում պ. պ. Ժամհարեանի և Ս. Մամիկոնեան Ձերդ Սրբութեան դիւանի գրութեան հակառակ ոչ միայն հարկաւոր օժանդակութիւնը ցոյց չտուին, այլ և նրանց բռնաձգողութեամբ ունեցաւ իւր բացասական հետևանքը Մոսկուայի վերաբերութեամբ: Պ. Մամիկոնեանը պատճառաբանում էր, թէ ինքը Մոսկուայի կոմիտէի համար է հաւաքում և երկու գործ կատարել չէ կարող, իսկ Յովհ. Ժամհարեանը, որ առաջին անգամ որոշ չափով պատրաստականութիւն էր ցոյց տուել մասնակցելու մի գումարով հանգանակութեան, երկրորդ անգամ ամենախիստ կերպով մերժեց, անյարմար համարելով ներկայ ժամանակը, և պնդում էր յետաձգել պատերազմից յետոյ: Նորա օրինակը ազդեց և Տարասեանների վերայ, որոնք խոստացել էին օգնել, բայց յետոյ հրաժարուեցան. այսպէս և Գինջուօղլեանները (...)⁵⁰: Մոսկուայի կոմիտէի անդամներն էլ առհասարակ բարեացակամ չէին այս նոր հանգանակութեան, իրենց ընկերութեան վնասակար համարելով երկրորդ նպատակի համար հանգանակութիւնը: Այս պատճառով Մոսկուայի հանգանակութիւնը չունեցաւ այնպիսի ցանկալի արդիւնք, ինչպէս Պետրոգրադում, թէպէտ և ես գործադրի ամենայն միջոց համոզելու և բացատրելու մեր հայ մեծատունների առաջ այս մեծ և կարևոր խնդիրը, որ ձեռնարկել է Ձերդ Սրբութիւնը, այսինքն՝ մեր միակ ու բարձրագոյն դպրոցի նիւթական ապահովութեան խնդիրը: Մինիստրական ճգնաժամերի, ներքին շփոթութիւնների բերմունքով յառաջ եկած անորոշութիւնն ու լքումը այնպէս ազդում էր հայ հասարակութեան և նորա ունևոր դասի հոգեբանութեան վերայ: Ստիպուած էի Մոսկուայում ընդհատել հանգանակութեան գործը ի նկատի ունենալով նաև ժամանակի սղութիւնը. Մոսկուայի հանգանակութիւնը, ինչպէս և մնացեալ քաղաքներինը պէտք է թողնել ապագային, աւելի յարմար ժամանակի:

Հայրապետական դիւանի կառավարչին⁵¹ գրած նամակներով իրազեկ եմ պահել միշտ Ձերդ Սրբութեան հաւաքուած գումարների մասին... ամփոփում եմ նուիրատուների անունները և ստացուած գումարները, որ արձանագրուած են ինձ յանձնուած նուիրատուաց ...մատեանի մէջ:

1. Պարոն Պատուական Ծատուրեան ստորագրել է քսան և հինգ հազար (25000) ռուբլի, որով պէտք է պահպանուի մի մի մշտնջենական սան իւր և տիկնոջ՝ Հռիփսիմէ Ծատուրեանի անունով: Մնացած հինգ հազար ռուբլին նուիրաբերել է իւր որդուց՝ Առաքել, Հեղինէ և Մերի Ծատուրեանների անունով իբրև միանուագ նպաստ: Մշտնջենական սան պահելու համար որոշուած է ընդհանրապէս 10000 ռ. որպէս անձեռնմխելի գումար, որի տոկոսով պէտք է պահուեն սաները:
2. Պարոն Միմէոն Ասուատուրեան նուիրել է երեսուն (30000) հազար ռուբլի, երեք մշտնջենական որդեգրի պահպանութեան համար, իւր,

⁵⁰ Ձեռագրում այս հատվածն անընթեռնելի է:

⁵¹ Նկատի ունի Տիրայր վրդ. Տեր-Հովհաննիսյանին, որի հետ հանգանակության ողջ ընթացքում եղել է ակտիվ անակազրույթան մեջ: Այս նամակներից մի քանիսը տես **Ջաքարյան Ա.**, նշվ. աշխ., 1985, էջ 79-90:

տիկին Ֆլորենցա Ասուատուրեանի և տիկին Աննա Ասուատուրեանի անունով:

- 3. Պ. Պօղոս Ղուկասեան նուիրել է երեսուն հազար (30000) թուրքի երեք սանի պահպանութեան համար, մէկը տիկին Եւգինէ Ղուկասեանի, երկուսը իւր դուստրերի՝ Հեղինէ և Մագթաղինէ Ղուկասեաններին անունով:
- 4. Պ. Յովհաննէս Շատինեանց ստորագրել է հինգ հազար (5000) թուրքի:
- 5. Պ. Դաւիթ Լեոնոզեանց ստորագրել է հինգ հազար թուրքի:
- 6. Պ. Ստեփան Գէորգեւիչ Լեոնոզով ստորագրել է տասն (10000) հազար թուրքի:
- 7. Պ. Յովհաննէս Մելիքեանց ստորագրել է երեք հազար (3000) թուրքի:
- 8. Պ. Գէորգ Կ. Փիթոյեանց նուիրել է հինգ հազար (5000) թուրքի:
- 9. Պ. Հայկ Գեանջեցեան ստորագրել է տասն հազար (10000) թուրքի՝ Եղիսաբէթ Գեանջեցեանի անունով մշտնջենական մի սան պահելու համար:
- 10. Պ. Էլիկում Բաբայեանց նուիրել է տասն հազար (10000) թուրքի տիկին Թագուհի Բաբայեանի անունով մշտնջենական մի որդեգիր պահելու համար:
- 11. Պ. Մ. Պ. Տէր Դաւթեանց հինգ հազար (5000) թուրքի:
- 12. Պ. Արշակ Յունանեանց նուիրել է տասն հազար (10000) թուրքի իւր հօր՝ Պետրոս Յունանեանցի անունով մշտական մի որդեգիր պահելու համար:
- 13. Պ. Գրիգոր Պ. Վանեցով ստորագրել է տասն հազար (10000) թուրքի:
- 14. Մասնաւոր կերպով իրենց լումաներն են տուել պ. պ. Ա. Բալանթար հարիւր (100) թուրքի, գնդապետ Թ. Յովսէփեան քսան և հինգ թուրքի, բժ. Նուէր Ներսէսեան տասն (10) թուրքի:
- 15. Պ. Ադ. Փեշեքիրովից ստացուած է երկու հազար (2000) թուրքի:
- 16. Պ. Պ. Յակոբ և Աբրահամ Ղուկասեանները ստորագրել են տասն հազար (10000) թուրքի՝ Հռիփսիմէ Ղուկասեանի անունով մշտական մի սան պահելու համար:

Այսպեսով Պետրոզարդում ստորագրուած է հարիւր եօթանասուն հազար հարիւր երեսուն և հինգ (170135) թուրքի:

Այս գումարներից Союзный банк-ի միջոցով Ձերդ Սրբութեան ուղարկել են տասն և հինգ հազար և առանձին անձանց եօթ հազար թուրքի (պ. պ. Դաւիթ Լեոնոզեանի, Գէորգ Փիթոյեանի, Արշակ Յունանեանի և Ադ. Փեշեքիրովի նուիրած գումարները), կրկին առանձին յայտարարութեամբ ներկայացրել են հարիւր երեսուն և հինգ թուրքի (135) (պ. պ. Ա. Բալանթարի, գնդապետ Յովսէփեանի և (...))⁵² Տէր-Ներսէսեանի նուիրած գումարները): Մնացած գումարները նուիրատուները իմ խնդրանքով անձամբ են փոխադրել կամ պիտի փոխադրեն Ձերդ Սրբութեան անունով:

Մոսկուայում հանգանակուած գումարներն են.

52 Ձեռագրում այս հատվածն անընթեռնելի է:

17. պ. Աղաբեգ Գեորգեան տասն հազար (10000) ռուբլի մշտնջենական մի սան պահելու իւր վաղամեռ Լևոն որդու անունով:

18. Գրիգոր Բաբայեանից ստացուած է հինգ հազար (5000) ռուբլի:

19. Եղբ. Արզումանյաններից ստացուած է հինգ հազար (5000) ռուբլի:

20. Գրիգոր Առաքելեանից երեք հազար (3000) ռուբլի:

21. Սոփիա և Յակոբ (...)՝⁵³ երկու հազար (2000) ռուբլի:

Այս գումարներից Ձերդ Սրբութեան անունով եղբ. Ժամհարեանների բանկի միջոցով ուղարկել եմ տասն և հինգ հազար (15000) ռուբլի, իսկ Աղաբեգ Գեորգեանը կարգադրել է իրենց առևտրական տան Երևանի ճիւղին հատուցանել իւր ստորագրած 10000 ռուբլին:

Բացի այս գումարներից (195, 135 ռ.) Մոսկուայի հայ կանանց կոմիտէն որոշել է պահել ճեմարանում հինգ սան տանկահայ որբերից, իրենց ընտրութեամբ, վճարելով իւրաքանչիւրի համար տարեկան չորս հարիւր ռուբլի կամ տարեկան 2000 ռ. բոլորի համար մինչև նրանց ուսում աւարտելը: Իսկ Պետրոգրադի Հայոց եկեղեցական խորհուրդը խոստացել է նպաստել ծածկելու 1916/17 ուսումնական տարուայ մեր ծախսերի պակասորդը: Տարեվերջին, երբ կփակուեն մեր ծախսոց մատեանները, հաշիվը կներկայացնեմ եկեղեցական խորհրդին:

Մատուցանելով Ձերդ Սրբութեան այս համառօտ տեղեկագիրը, խոնարհաբար խնդրում եմ, հաճեք օրհնել նուիրատուներին դիւանի միջոցով կամ մեծ գումարների համար յատուկ կոնդակներով ի խրախոյս և ի բարոյական վարձատրութիւն այսպիսի առատ նուիրաբերութեան համար:

Այլև թոյլտուութիւն եմ խնդրում ճեմարանի հին և նոր բարերարների անունը, որոնք ոչ պակաս քան 10000 ռ. նուէր են տուել, արձանագրել հանդիսարանում կամ մի այլ պատշաճ տեղում ի նշան երախտագիտութեան անցեալի և ի խրախոյս նորանոր նուիրատուութիւնների: Աւելի փոքր գումարները պէտք է աւելացնել ապահովութեան դրամագլխի վերայ, իսկ նուիրատուների անունները արձանագրել նուիրատուաց յատուկ մատեանում:

Ձերդ Սրբութեան խոնարհ որդի՝

Գարեգին Եպիսկոպոս

15 յուլ. 1917 թ.

Ս. Էջմիածին

Ի պատասխան Գարեգին Եպիսկոպոսի խնդրանքին՝ որևէ կերպ հավերժացնել նվիրատուների անունները, Գևորգ Ե հայրապետը հրահանգում է կաթողիկոսական դիվանին՝

ա. մարմարե տախտակի վրա արձանագրել Գևորգյան հոգևոր ճեմարանի հանգուցյալ և կենդանի բոլոր այն բարերարների անունները, որոնք նվիր-

53 Ձեռագրում այս հատվածն անընթեռնելի է:

րաբերել են ոչ պակաս, քան 10.000 ռուբլի⁵⁴, և այն ամրացնել ճեմարանի հանդիսարանում կամ դրսի վերին սրահում,

բ. հատուկ օր սահմանել բոլոր բարերարների անվան հիշատակության համար՝ «յօրհնություն բարի յիշատակի հանգուցեալների, ի խրախոյս կենդանիների եւ նոր բարերարների եւ ի հոգևոր դաստիարակություն նորա յարկի տակ կրթուող սերնդի»,

գ. պահել նվիրատուների հատուկ մատյան՝ մեկ առ մեկ գրանցելով նրանց անունները և նվիրաբերած գումարների չափը⁵⁵:

Ամփոփելով մեր ուսումնասիրության այս մասը՝ պետք է նշենք, որ Գարեգին Հովսեփյանի 1914-1917 թթ. գործունեության շնորհիվ հնարավոր է դառնում իսպառ կործանումից փրկել ցեղասպանության հետևանքով գաղթական դարձած հազարավոր հայորդիների, ապահովել հարյուրավոր որբերի կյանքի հետագա ընթացքն ու կրթությունը, իսկ 1917 թվականի առաջին կեսին կատարած նրա հանգանակության միջոցով՝ ևս մի քանի տարով ապահովել Գևորգյան հոգևոր ճեմարանի գործունեությունը: Նրա կատարած աշխատանքի գրավոր վկայությունն էր Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի 1917 թ. հուլիսի 26-ի կոնդակը, որում կարդում ենք. «**Ուստի զՀայրականիս մերոյ գոհունակություն և զՀայրապետականին մերոյ օրհնություն տամք Ձեզ առհաւատչեայ ի ձեռն Կոնդակիս այսորիկ, զջանիցդ որ բերէք ի սեղան հասարակաց գնահատելով արդիւնք, որ ի գումար երկուց հարիւր եւ երէք տասանից հազար ռուբլեաց յանգաւ:**

Օրհնեսցէ Տէր զմշակդ արի Մեծի Տանս, որ չխնայեցէր արդիւնաւորել ըստ բերմանց ծանու պարագայից ժամանակիս՝ յապահովութիւն մեծի կրթարանին, զդեկ որոյ ի Ձեզ հաւատացաւ ի Մէնջ: Յուսաւ յուսամ, եթէ ի մօտոյ, թէ Տէր յաջողեսցէ, կրկին յայդ գործ ելանել դիպեսցի, ոչինչ նուազ ջան եւ եռանդ ունեցիք դնել յայն»⁵⁶:

Շարու և նակու թյ ու նը հաջորդիվ

Սարգիս Ռ. Մելքոնյան - գիտական հետաքրքրությունների շրջանակում են վարդապետական աստվածաբանությունը, հայ եկեղեցու քրիստոսաբանության հարցերը, արևելյան եկեղեցիների դավանաբանության պատմությունը, միջեկեղեցական հարաբերությունների պատմական և ներկա գործընթացները:

Էլեկտրոնային հասցե՝ sargis.r.melkonyan@gmail.com

54 Գումարի այս չափի ամրագրումը պատահական չէր, քանի որ հենց այդքան էր որոշվել յուրաքանչյուր որբի կամ ճեմարանի սանի պահպանության համար:
55 Տես **Գարեգին Ա Հովսեփյան**, Վավերագրեր, հատ. Ա, էջ 253-254:
56 Նույն տեղում, էջ 255:

Summary

GAREGIN I HOVSEPYAN. THE BLESSED PATRIARCH AND GREAT SCIENTIST

Part IV: National-public activity in 1914-1917

Sargis R. Melkonyan

Candidate of Historical Sciences

Key words - Garegin I Hovsepyan, General Committee of Fraternal Assistance, refugees, collection of donations, Gevorgian Theological Seminary.

In the previous parts of our study dedicated to Garegin I Hovsepyan, which were published in the issues of 2018 (N 1 (61), 2 (62), 3 (63)) of journal “Vem”, we thoroughly presented his student years and the programs of the great scholar and church leader for the reformation of the Armenian Church. The current publication, continuing a series of our articles on Hovsepyan, we present to the reader the national-public activities of Garegin Hovsepyan in 1914-1917 as the Head of the General Committee of Fraternal Assistance of St. Etchmiadzin and as the rector of the Gevorgian Theological Seminary.

During the years of the First World War, due to genocide and deprivation of the homeland of Armenians organized by the Turkish government, many refugees from the western provinces of Armenia found their salvation in St. Etchmiadzin. For organizing the salvation and care of these refugees and orphans in December 1914, by order of Catholicos Gevorg V Surenyants, the General Committee of Fraternal Assistance was established in Etchmiadzin, which from September 1915 to August 1916 was led by Archimandrite Garegin Hovsepyan. Under his leadership, the committee implemented the following activities:

1. From the staff of the Teaching Department of Gevorgian Seminary a separate department of specialists was organized, which was supposed to deal with the salvation and research of the cultural values of the Armenians preserved during the genocide.
2. For providing refugees with clothing the Work House was opened, thanks to which many refugee women were provided with jobs.
3. A school for refugee children was opened adjacent to the parish schools of Vagharshapat.

In the article, we presented especially in detail the travel and collection of donations of Garegin Hovsepian in St. Petersburg and Moscow in the spring of 1917 for preserving Gevorgian Seminary and taking care for orphans. In this regard, we have published an unpublished document, in which Hovsepian presents the results of his trip to Catholicos Gevorg V Surenyants.

During this journey for the first time to St. Petersburg and for the second time to Moscow, Garegin Hovsepian was able to collect the necessary amount, with the help of which it was possible to ensure the work of the Gevorgian Theological Seminary before its closure due to the war, and then due to the revolution.

Резюме

ГАРЕГИН І ОВСЕПЯН. БЛАЖЕННЫЙ КАТОЛИКОС И ВЕЛИКИЙ УЧЕНЫЙ

Часть IV. Национально-общественная деятельность в 1914-1917 гг.

Саркис Р. Мелконян

Ключевые слова – Гарегин І Овсепян, Главный комитет братской помощи, беженцы, сбор пожертвований, духовная семинария Геворгян.

В предыдущих частях нашего исследования, посвященного Гарегину І Овсепяну, которые были опубликованы в номерах 2018 г. (№ 1(61), 2(62), 3(63)) журнала «Вэм», мы подробно представили студенческие годы и программы реформирования Армянской церкви великого ученого и церковного деятеля. Нынешней публикацией, продолжая ряд наших статей, посвященных Овсепяну, мы представляем читателю национально-общественную деятельность Гарегина Овсепяна в 1914-1917 гг. в качестве руководителя Главного комитета братской помощи Св. Эчмиадзина и ректора Духовной семинарии Геворгян.

В годы Первой мировой войны из-за организованного турецким правительством геноцида и лишения армян родины многие беженцы из Западной Армении нашли спасение в Св. Эчмиадзине. Для организации спасения этих беженцев и сирот и заботы о них в декабре 1914 года по приказу католикоса Геворга V Суренянца в Эчмиадзине был создан Главный комитет братской помощи, которым с сентября 1915 года до августа 1916 года руководил архимандрит Гарегин Овсепян. Под его руководством комитет осуществил следующие мероприятия:

1. Из состава преподавательского управления семинарии Геворгян было организовано отдельное управление специалистов, которое должно было зани-

маться спасением и исследованием культурных ценностей армян, сохранившихся во время геноцида.

2. Для обеспечения беженцев одеждой был открыт Дом работы, благодаря которому многие женщины из числа беженцев были обеспечены работой.

3. При церковно-приходских школах Вагаршапата открылись школы для детей беженцев.

В статье мы особенно подробно представили поездку и сбор пожертвований в С. Петербурге и Москве Гарегином Овсепяном весной 1917 года для сохранения семинарии Геворгян и заботы о сиротах. В связи с этим мы опубликовали до сих пор неопубликованный документ, в котором Овсепян представляет католикосу Геворгу V Сурянццу результаты своей поездки.

Во время поездки сначала в Петербург, а затем - в Москву Гарегин Овсепян смог собрать необходимую сумму, которой стало возможным обеспечить работу духовной семинарии Геворгян до ее закрытия из-за войны, а затем – революции.

REFERENCES

1. **Adamyán Av.**, Garegin ark'episkopos Hovsep'yani óragirě yev husherě, «Ējmiatsin» amsagir, S. Ējmiatsin, 1970, N ZHA, pp. 50-55 (**In Armenian**).
2. **Banaser**, Antip vaveragrér lusahogi Garegin kat'oghikos Hovsep'yani kensagrut'yan hamar, «Ējmiatsin» amsagir, S. Ējmiatsin, 1952, N Ē, pp. 37-47 (**In Armenian**).
3. **Garegin Hovsep'yani** óragirě, Yerevani Mesrop Mashtots'i anvan Matenadaran, Garegin Hovsep'yani arkhiv, t'ght'. 91, vav. 5 (**In Armenian**).
4. **Garegin A Yovsēp'ean**, P'astat'ght'eri yew niwt'eri zhoghovatsu, hat. A., kazmogh` G. Awagean, S. Ējmiatsin, 2017 (**In Armenian**).
5. **Grigoryan H.**, Hishoghut'yunner Tann Kilikio Vehap'ar Kat'oghikos Hovsep'yani masin, «Ējmiatsin» amsagir, S. Ējmiatsin, 1947, A-B, pp. 21-26 (**In Armenian**).
6. **Zak'aryan A.**, Garegin Hovsep'yani yev Tirayr Ter-Hovhannisyani namakagrut'yunits', «Lraber» has. git., Yer., 1985, N 5, pp. 79-90 (**In Armenian**).
7. Khmbagrakan. Hayrapetakan Patuirakě, «Sion», Yerusaghēm, 1935, N 2, pp. 37-41 (**In Armenian**).
8. Hayastani azgayin arkhiv, f. 57, ts'. 3, g. 73, t'. 147-148, shrj. (**In Armenian**).
9. Mayr At'or S. Ējmiatsině Arajin ashkharhamarti yev Hayastani Arajin hanrapetut'yan tarinerin (1914-1920): P'astat'ght'eri yev nyut'eri zhoghovatsu, hat. A (1914-1917), kazm.` G. Avagyan, S. Ējmiatsin, 2018 (**In Armenian**).
10. **Melk'onyan S. R.**, Garegin A Hovsep'yan. Yeranashnorh Hayrapetn u mets gitnakaně. Mas A: Usumnarut'yan tarinerě (1877-1897 t't'), «Vēm» hamahaykakan handes, Yer., 2018, N (61), pp. I (265)-XXIX (293) (**In Armenian**).
11. **Melk'onyan S. R.**, Garegin A Hovsep'yan. Yeranashnorh Hayrapetn u mets gitnakaně. Mas B: Barenorogh'akan tsragrerě, «Vēm» hamahaykakan handes, Yer., 2018, N 2 (62), pp. I (277)-XV (291) (**In Armenian**).
12. **Melk'onyan S. R.**, Garegin A Hovsep'yan. Yeranashnorh Hayrapetn u mets gitnakaně. Mas G: Barenorogh'akan tsragrerě gitakrt'akan volortum, «Vēm» hamahaykakan handes, Yer., 2018, N 3 (63), pp. I-XX (**In Armenian**).

13. **Yep'rikyan A.**, Yeghbayrakan Ōgnut'yan glkhavor kargadir handznazhoghovi gortsuneut'yunn Arajin ashkharhamarti tarinerin, «Ējmiatsin» amsagir, S. Ējmiatsin, 2015, N D, pp. 56-67 (**In Armenian**).
14. **Yovsēp'ean G. ts. vrd.**, Dzeragrakan norut'iwnner (nakhnakan haghordagrut'iwn), «Ararat» amsagir, S. Ējmiatsin, 1917, N B-G, pp. 193-198 (**In Armenian**).
15. Norin Vehap'arut'yan tnōrinut'iwnnerits', «Ararat» amsagir, Sb. Ējmiatsin, 1917, N A, pp. 5-24 (**In Armenian**).
16. **Ulubabyan B.**, Hayaget u hogevorakan mets gortsich' Garegin Hovsep'yani dzeragirē, «Banber Hayastani arkhivneri», Yer., 1989, N 3 (85), pp. 105-160 (**In Armenian**).
17. **K'yoshkeryan A.**, Garegin Hovsep'yani antip ōragirē, «Grakan t'ert'», Yer., 1968, ōgostosi 9 (**In Armenian**).